Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-378-26.09.2022,07.11.2022-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-10-րդ մասերով.

«5. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը վճարվում են անկանխիկ եղանակով, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասում նշված դեպքերի:

6. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը, սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անկանխիկ եղանակով վճարվում է ընտանիքի միակ չափահաս անդամին կամ ընտանիքի չափահաս անդամին՝ ընտանիքի չափահաս մյուս բոլոր անդամների գրավոր համաձայնությամբ (եթե ընտանիքի կազմում կան մեկից ավելի չափահաս անդամներ):

7. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը դիմումի հիման վրա վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով, եթե գումարը վճարվում է ընտանիքի չափահաս անդամին (ընտանիքի միակ չափահաս անդամին կամ ընտանիքի մյուս բոլոր չափահաս անդամների գրավոր համաձայնությամբ գումարը ստացող ընտանիքի չափահաս անդամին), ով առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ է կամ լրացել է նրա 75 տարին:

8. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը կանխիկ եղանակով վճարելը նպաստի կամ հրատապ օգնության գումարը ընտանիքի չափահաս անդամին վճարելն է:

9. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստն անկանխիկ եղանակով վճարելը գումարը ընտանիքի միակ չափահաս անդամի կամ սույն հոդվածի 6-րդ մասում նշված ձեւով ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության մեջ նշված ընտանիքի չափահաս անդամի անվամբ (այսուհետ՝ սոցիալական ապահովության հաշվի տեր) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված սոցիալական ապահովության հաշվին փոխանցելն է:

10. Հրատապ օգնությունն անկանխիկ եղանակով վճարելը գումարը ընտանիքի միակ չափահաս անդամի կամ սույն հոդվածի 6-րդ մասում նշված ձեւով ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության մեջ նշված ընտանիքի չափահաս անդամի անվամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված միանվագ դրամական վճարների հաշվին փոխանցելն է:»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածում.

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) եթե պարզվում է, որ ընտանիքի որեւէ անդամի կողմից ներկայացված՝ ընտանեկան նպաստը տրամադրելու որոշման համար հիմք հանդիսացած տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն.».

2) 1-ին մասի 3-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

3) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Ընտանեկան նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 1.1-ին, 4-րդ կետերով նշված դեպքերում՝ այդ հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:»:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածի.

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) եթե պարզվում է, որ ընտանիքի որեւէ անդամի կողմից ներկայացված՝ սոցիալական նպաստը տրամադրելու որոշման համար հիմք հանդիսացած տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն.».

2) 1-ին մասի 3-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

3) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 1.1-ին, 4-րդ կետերով նշված դեպքերում՝ այդ հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նշված դեպքում՝ հայտնաբերման ամսվանից:»:

Հոդված 5. Օրենքի 23-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) եթե պարզվում է, որ ընտանիքի որեւէ անդամի կողմից ներկայացված՝ հրատապ օգնությունը տրամադրելու որոշման համար հիմք հանդիսացած տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն.».

2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Եռամսյակային հրատապ օգնություն ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետով նշված դեպքում՝ հայտնաբերման ամսվանից,

2) 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով նշված դեպքերում՝ այդ հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից:»:

Հոդված 6. Օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասից հանել «կամ Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատորի (այսուհետ՝ Ազգային օպերատոր) անկանխիկ փոստային վճարային ծառայությունների միջոցով նպաստի գումարը ծնողի հաշվարկային հաշվին» բառերը:

Հոդված 7. Օրենքի 28.4-րդ հոդվածի24-րդ մասից հանել «կամ Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատորի (այսուհետ՝ Ազգային օպերատոր)

անկանխիկ փոստային վճարային ծառայությունների միջոցով խնամքի նպաստի գումարը ծնողի հաշվարկային հաշվին» բառերը:

Հոդված 8. Օրենքի 39-րդ հոդվածի 12-րդ մասից հանել «կամ Ազգային օպերատորի» բառերը եւ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 14-16-րդ մասերով՝

«14. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը վճարվում է կանխիկ կամ անկանխիկ եղանակով՝ դիմումի հիման վրա, եթե ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը նշանակվել է (նշանակման դիմումը ներկայացվել է)՝

1) քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչեւ 2023 թվականի փետրվարի 1-ը.

2) մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչեւ 2023 թվականի հուլիսի 1-ը:

15. Սույն հոդվածի 14-րդ մասում նշված ժամկետներից հետո ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ եւ հրատապ օգնություն նշանակելու, վերականգնելու կամ վճարման եղանակը փոխելու կամ վճարող կազմակերպությունը փոխելու դիմում կամ ընտանեկան նպաստին, սոցիալական նպաստին կամ հրատապ օգնությանվ առնչվող ցանկացած գրավոր դիմում ներկայացնելու դեպքում ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը վճարվում է անկանխիկ եղանակով՝ դիմումում նշված բանկի միջոցով:

16. Մինչեւ սույն հոդվածի 14-րդ մասում նշված ժամկետները նշանակված ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը կանխիկ եղանակով վճարվում է մինչեւ դիմումի (այդ թվում՝ սույն հոդվածի 15-րդ մասում նշված դիմումի) հիման վրա վճարման եղանակը փոխելը: Եթե սույն մասում նշված դիմումը չի ներկայացվում, ապա նպաստի վճարումը շարունակվում է անկանխիկ եղանակով, Կառավարության սահմանած կարգով ընտրված բանկի միջոցով՝

1) քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ 2023 թվականի հուլիսի 1-ից.

2) մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ 2024 թվականի հունվարի 1-ից:»:

Հոդված 9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1) Սույն օրենքը, բացառությամբ 6-րդ հոդվածի եւ 7-րդ հոդվածի՝ Ազգային օպերատորի վերաբերյալ դրույթի, ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն օրենքի 6-րդ հոդվածը եւ 7-րդ հոդվածի՝ Ազգային օպերատորի վերաբերյալ դրույթն ուժի մեջ են մտնում 2023 թվականի փետրվարի 1-ից: Օրենքի 39-րդ հոդվածի 16-րդ մասում նշված կարգը սահմանելու մասին Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

2) Ազգային օպերատորի միջոցով 2023 թվականի հունվարի 31-ի դրությամբ խնամքի նպաստն անկանխիկ եղանակով ստացող նպաստառուի խնամքի նպաստի վճարումը շարունակվում է բանկի միջոցով՝ Կառավարության սահմանած կարգով: Եթե 2022 թվականի դեկտեմբերի 1-ից հետո՝ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը, ներկայացվում է խնամքի նպաստ նշանակելու, խնամքի նպաստ վճարելը վերսկսելու, խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու դիմում, ապա խնամքի նպաստն անկանխիկ եղանակով վճարվում է բացառապես բանկի միջոցով՝ հաշվի առնելով սույն օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասը: Սույն հոդվածում նշված կարգը սահմանելու մասին Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-378-26.09.2022,07.11.2022-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-10-րդ մասերով.

«5. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը վճարվում են անկանխիկ եղանակով, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասում նշված դեպքերի:

6. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը, սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անկանխիկ եղանակով վճարվում է ընտանիքի միակ չափահաս անդամին կամ ընտանիքի չափահաս անդամին՝ ընտանիքի չափահաս մյուս բոլոր անդամների գրավոր համաձայնությամբ (եթե ընտանիքի կազմում կան մեկից ավելի չափահաս անդամներ):

7. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը դիմումի հիման վրա վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով, եթե գումարը վճարվում է ընտանիքի չափահաս անդամին (ընտանիքի միակ չափահաս անդամին կամ ընտանիքի մյուս բոլոր չափահաս անդամների գրավոր համաձայնությամբ գումարը ստացող ընտանիքի չափահաս անդամին), ով առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ է կամ լրացել է նրա 75 տարին:

8. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը կանխիկ եղանակով վճարելը նպաստի կամ հրատապ օգնության գումարը ընտանիքի չափահաս անդամին վճարելն է:

9. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստն անկանխիկ եղանակով վճարելը գումարը ընտանիքի միակ չափահաս անդամի կամ սույն հոդվածի 6-րդ մասում նշված ձեւով ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության մեջ նշված ընտանիքի չափահաս անդամի անվամբ (այսուհետ՝ սոցիալական ապահովության հաշվի տեր) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված սոցիալական ապահովության հաշվին փոխանցելն է:

10. Հրատապ օգնությունն անկանխիկ եղանակով վճարելը գումարը ընտանիքի միակ չափահաս անդամի կամ սույն հոդվածի 6-րդ մասում նշված ձեւով ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության մեջ նշված ընտանիքի չափահաս անդամի անվամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված միանվագ դրամական վճարների հաշվին փոխանցելն է:»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածում.

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) եթե պարզվում է, որ ընտանիքի որեւէ անդամի կողմից ներկայացված՝ ընտանեկան նպաստը տրամադրելու որոշման համար հիմք հանդիսացած տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն.».

2) 1-ին մասի 3-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

3) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Ընտանեկան նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 1.1-ին, 4-րդ կետերով նշված դեպքերում՝ այդ հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:»:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածի.

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) եթե պարզվում է, որ ընտանիքի որեւէ անդամի կողմից ներկայացված՝ սոցիալական նպաստը տրամադրելու որոշման համար հիմք հանդիսացած տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն.».

2) 1-ին մասի 3-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

3) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 1.1-ին, 4-րդ կետերով նշված դեպքերում՝ այդ հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նշված դեպքում՝ հայտնաբերման ամսվանից:»:

Հոդված 5. Օրենքի 23-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) եթե պարզվում է, որ ընտանիքի որեւէ անդամի կողմից ներկայացված՝ հրատապ օգնությունը տրամադրելու որոշման համար հիմք հանդիսացած տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն.».

2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Եռամսյակային հրատապ օգնություն ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետով նշված դեպքում՝ հայտնաբերման ամսվանից,

2) 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով նշված դեպքերում՝ այդ հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից:»:

Հոդված 6. Օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասից հանել «կամ Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատորի (այսուհետ՝ Ազգային օպերատոր) անկանխիկ փոստային վճարային ծառայությունների միջոցով նպաստի գումարը ծնողի հաշվարկային հաշվին» բառերը:

Հոդված 7. Օրենքի 28.4-րդ հոդվածի—24-րդ մասից հանել «կամ Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատորի (այսուհետ՝ Ազգային օպերատոր)

անկանխիկ փոստային վճարային ծառայությունների միջոցով խնամքի նպաստի գումարը ծնողի հաշվարկային հաշվին» բառերը:

Հոդված 8. Օրենքի 39-րդ հոդվածի 12-րդ մասից հանել «կամ Ազգային օպերատորի» բառերը եւ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 14-16-րդ մասերով՝

«14. Ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը վճարվում է կանխիկ կամ անկանխիկ եղանակով՝ դիմումի հիման վրա, եթե ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը նշանակվել է (նշանակման դիմումը ներկայացվել է)՝

1) քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչեւ ~~2022~~ 2023 թվականի ~~դեկտեմբերի~~փետրվարի 1-ը~~,~~.

2) մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչեւ 2023 թվականի հուլիսի 1-ը:

15. Սույն հոդվածի 14-րդ մասում նշված ժամ~~ն~~կետներից հետո ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ եւ հրատապ օգնություն նշանակելու, վերականգնելու կամ վճարման եղանակը փոխելու կամ վճարող կազմակերպությունը փոխելու դիմում կամ ընտանեկան նպաստին, սոցիալական նպաստին կամ հրատապ օգնությանվ առնչվող ցանկացած գրավոր դիմում ներկայացնելու դեպքում ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը վճարվում է անկանխիկ եղանակով՝ դիմումում նշված բանկի միջոցով:

16. Մինչեւ սույն հոդվածի 14-րդ մասում նշված ժամկետները նշանակված ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը կանխիկ եղանակով վճարվում է մինչեւ դիմումի (այդ թվում՝ սույն հոդվածի 15-րդ մասում նշված դիմումի) հիման վրա վճարման եղանակը փոխելը: Եթե սույն մասում նշված դիմումը չի ներկայացվում, ապա նպաստի վճարումը շարունակվում է անկանխիկ եղանակով, Կառավարության սահմանած կարգով ընտրված բանկի միջոցով՝

1) քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ 2023 թվականի ~~հունվարի~~հուլիսի 1-ից~~,~~.

2) մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ 2024 թվականի հունվարի 1-ից:»:

Հոդված 9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1) Սույն օրենքը, բացառությամբ 6-րդ հոդվածի եւ 7-րդ հոդվածի՝ Ազգային օպերատորի վերաբերյալ դրույթի, ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն օրենքի 6-րդ հոդվածը եւ 7-րդ հոդվածի՝ Ազգային օպերատորի վերաբերյալ դրույթն ուժի մեջ են մտնում 2023 թվականի փետրվարի 1-ից: Օրենքի 39-րդ հոդվածի 16-րդ մասում նշված կարգը սահմանելու մասին Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

~~*Հոդված 10.*~~ 2) Ազգային օպերատորի միջոցով 2023 թվականի հունվարի 31-ի դրությամբ խնամքի նպաստն անկանխիկ եղանակով ստացող նպաստառուի խնամքի նպաստի վճարումը շարունակվում է բանկի միջոցով՝ Կառավարության սահմանած կարգով: Եթե 2022 թվականի դեկտեմբերի 1-ից հետո՝ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը, ներկայացվում է խնամքի նպաստ նշանակելու, խնամքի նպաստ վճարելը վերսկսելու, խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու դիմում, ապա խնամքի նպաստն անկանխիկ եղանակով վճարվում է բացառապես բանկի միջոցով՝ հաշվի առնելով սույն օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասը: Սույն հոդվածում նշված կարգը սահմանելու մասին Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-378-26.09.2022,07.11.2022-ԱՍ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-378-26.09.2022,07.11.2022-ԱՍ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվում է քաղաքներում և 1000-ից ավելի բնակիչ ունեցող կանխիկ եղանակով վճարման հնարավորություն տալ, եթե գյուղերում ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ և հրատապ օգնության գումարը նշանակվել է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը, իսկ նշված բնակավայրերում անկանխիկ վճարման համակարգ ներդնելու ժամկետը սահմանել 2023 թվականի հունվարի 1-ը: Հաշվի առնելով օրենքի ընդունման հնարավոր ժամկետները և օրենքի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտի մշակման համար իրատեսական ժամկետ սահմանելու անհրաժեշտությունը, լրամշակված նախագծի 10-րդ հոդվածով առաջարկվում է երկարաձգել վերոնշյալ ժամկետները և Օրենքի 39-րդ հոդվածի նոր լրացվող՝ 1. 14-րդ մասի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) քաղաքներում և 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչեւ 2023 թվականի փետրվարի 1-ը,». 2. 16-րդ մասի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ 2023 թվականի հուլիսի 1-ից,»:		
2.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 9-րդ հոդված**	Նախագծի 9-րդ և 10-րդ հոդվածներով նախատեսվող կարգավորումներն առաջարկվում է միավորել եզրափակիչ մաս և անցումային դրույթներ վերտառությամբ 9-րդ հոդվածում՝ առանձին մասերի տեսքով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը ունենում է եզրափակիչ մաս, եթե սահմանվում են՝ նորմատիվ իրավական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները, գործողության ժամկետները, երբ նորմատիվ իրավական ակտը կամ դրա առանձին մասը նախատեսված է սահմանափակ ժամկետով գործողության համար (ժամանակավոր ակտ կամ ժամանակավոր դրույթ):		
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-378[1]-26.09.2022-ԱՍ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի վերնագիր**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը հաշվի առնելով, առաջարկվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառից հետո լրացնել «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումներն առաջարկվում է միավորել եզրափակիչ մաս և անցումային դրույթներ վերտառությամբ մեկ հոդվածում՝ առանձին մասերի տեսքով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը ունենում է եզրափակիչ մաս, եթե սահմանվում են՝ նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները, գործողության ժամկետները, երբ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նորմատիվ իրավական ակտը կամ դրա առանձին մասը նախատեսված է սահմանափակ ժամկետով գործողության համար (ժամանակավոր ակտ կամ ժամանակավոր դրույթ):		